

յարակցութիւնը անտարակոյս աւելի կը զօրացնեն Իւզարերից եկեղեցիին հայկական ծագման հաստատութիւնը: Այստեղ պէտք կ'ըլլայ աւելցնել թէ Հայք Ս. Յարութեան տաճարին մէջ ևս ունին Իւզարերից սեղան մը, որ Ուշարապիսան տեղէն քանի մը օտք աջ կողմը, կամարին տակ կը գտնուի: Դարձեալ Հայոց յատուկ է սեղանին կից մեծ սիւնը, որ կայսերական ըստեւած կամարին հարաւային ոտքն է. նոյն սիւնին վրայ Հայք ունին Ղազարու Յարութեան մեծ պատկեր մը:

Ս. Յակոբի հին միաբաններէն հանգուցեալ Մկրտիչ վրդ. Արծրունեան (✱ 1861) իր Ասորագրութիւն Երուսաղէմի գրքին մէջ (էջ 174) հետեւեալ սխալ տեղեկութիւնը կու տայ Իւզարերից եկեղեցիին տեղւոյն մասին. Յաղագս Իւզարերից եկեղեցոյն, որ ասի ուսպնատիւնի, զոր Արաքացիք կը կոչեն Տէր ըլ Ասկս, խորագրով մը, որով հասկցնել կ'ուզէ թէ նոյն եկեղեցին կը գտնուէր Թարիքը Սիդդի Մարիամ փողոցին հիւսիսային կողմը քառասուն մէթր հեռու գտնուած տան տեղը, ուր կը գտնուի Զաւարաց եկեղեցիին դէպ արեւելքը տասն և հինգ քայլ հեռի: Նոյն տեղի գտնուած եկեղեցին Իւզարերից եկեղեցին չէ, այլ Ասորոց մէկ հնագոյն եկեղեցին է, որ կը կոչուի էլ Ասկսիեհ, բայց կ'երևի որ յունարէն Ηερωδης բառին ազաւազութիւնն(*) արարերէն խօսողներու բերանին մէջ էլ Ասկս բառին փոխուած է. ասկս կը նշանակէ ռայ, այդ պատճառաւ Արծրունեան վրդ. հետեւելով նոյն սխալին՝ տեղւոյն Ասորոց վանքը Ռայկատիւնի անուանած է. մինչ ըստ յիշատակարանաց, ան Հերովդէս Անտիպասի պալատին տեղըն էր, Պիղատոսի տտեանին հիւսիսային արեւելքը, ինչպէս յայտնի է վերև յիշուած յունարէն բառէն: Նայելով պատմութեան՝ Երուսաղէմի Ասորիները Խաչակիրներէն յառաջ նոյն տեղւոյն տիրացած են ու եկեղեցիի վերածած են զայն: 1902 ին ալ գտնուած են անոր փլատակները որ կ'երևան Զաղանաց եկեղեցիին արեւելքը (Տէս Nouveau guide de terre sainte P. B. Meistermann, էջ 150):

(*) ք գիրը լ-ի փոխուած է:

